
ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ
ԸՍՏ ԱՐՏԱՇԱՏԻ ԿՆՔԱԴՐՈՇՄՆԵՐԻ

ԺՈՐԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Արտաշատը հիմնադրվել է մ. թ. ա. 189 /188 թթ. Արտաշես I-ի կողմից, և մոտ 600 տարի եղել է Հայոց մայրաքաղաքը: Այն, գտնվելով միջազգային առևտրական գլխավոր ճանապարհների խաչմերուկում, շուտով դարձավ ոչ միայն Հայաստանի վարչաքաղաքական, առևտրատնտեսական ու մշակութային ամենախոշոր կենտրոնը, այլև անտիկ աշխարհի մեծ ու նշանավոր քաղաքներից մեկը:

Արտաշատում հայտնաբերված առաջնակարգ նյութերի շարքում իրենց գիտական բացառիկ արժեքով և տեղեկատվությամբ աչքի են ընկնում կավե կնքադրոշմները՝ բուլլաները, որոնք պատկանում են մ. թ. ա. 189/188 թթ. – մ. թ. 59 թթ. ժամանակահատվածին: Դրանք ութ հազարից ավելի են, որոնցից վեց հազարի պատկերները ընթեռնելի են և ներկայացնում են 1036 ինքնուրույն տիպ, որոշ տիպեր հասնում են մի քանի հարյուր օրինակի: Դա ցույց է տալիս, թե ինչքան ընդարձակ կապեր է ունեցել արխիվի տերը, և որքան ինտենսիվ են եղել հարաբերությունները տարբեր գործակալների հետ: Կնքադրոշմների մի մասն առնչվում է Պարթևական աշխարհին:

Պարթևական կնիքները քիչ են ուսումնասիրված, որովհետև նյութը բավարար չէ: Կնքադրոշմներ հայտնի էին միայն Նիսայից¹, այժմ նաև Տիգրիսի վրայի Սելևկիայից և հրատարակվել են Ա. Ինվերնիցիի² կողմից, ուստի դժվար է ասել՝ ինչ չափի է եղել կնիքների կիրառությունը: Պարզ է, որ հելլենիստական ազդեցությունը, հատկապես կառավարող շրջաններում, բավականին ուժեղ է եղել:

Նիսայի կնքադրոշմների մեծ մասն արված է քարե կնիքներով: Կեսն ունի պարթևական գրությամբ արձանագրություններ, միայն մեկն է հունական լեզունդով: Պատկերների մեծ մասն արեմենյան ժամանակաշրջանի թեմաներով է: Բյուրոկրատական կենտրոնացված ապարատը նպաստում էր հին արեմենյան պրակտիկայի պահպանմանը: Արշակունիները դրանով հաստատում էին իրենց ազգակցությունն Արեմենյանների հետ: Արտաշատյան կնքադրոշմներից մոտ երեք տասնյակը արամեերեն³ ու հունարեն արձանագրություններ և մենագիրներ են՝ առանց պատկերի կամ պատկերով:

¹ М. Е. М а с с о н, Г. А. П у г а ч е н к о в а. Отгиски парфянских печатей из Нисы.– “Вестник древней истории”, 1954, № 4, с. 159-169, рис. 1-50.

² A. Invernizzi. Bulles de Séleucie du Tigre.– “Annales Archéologiques Arabes Syriennes”. 1971, № 21, p. 105-108, Ն ու յ ն ի՝ Bullae from Selleucia.– Mesopotamia, № 3-4 (1968-69), p. 69-124.

³ Ընթերցել են Ս. Պետերբուրգի Արևելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատակից Վ. Ա. Լիվշիցը և Թուրինի համալսարանի գիտական աշխատակից Է. Մորանոն: Արամեերենը գրության ձևով կապվում է հյուսիսմիջագետքյան արամեական ավանդների հետ (տե՛ս N a v e h.

№ 749 (60 օրինակ) և 751 (3 օրինակ) կնքադրոշմների մեղվի պատկերի գլխավերնում արամեերեն գրված է htm(h) wr/dh, hamtar bar he (կարելի է (br.) h(y), <որդու գինին>, <կնիք>- հնարավոր է պարթևական muhr-ի գա ղափարագիրն է ինչպես Նիսայից հայտնաբերված փաստաթղթերում է՝ mwdrbr=muhrbar, “bearer of the seal”, <պաշտոնյա>, գինով կարասի կնքողը): Առաջին բառը՝ հոր անունը, չի կարդացվում: Կնքադրոշմը թվագրվում է մ. թ. ա. II-I դդ. (Վ. Ա. Լիվշից): Հետաքրքիրն այն է, որ այս բառերը կրկնվում են մեղվի պատկերով երկու տարբեր կնքադրոշմների վրա: Հնարավոր է, որ կնիքը փչանալուց հետո, տերը երկրորդն է պատվիրել նախորդի նման, քանի որ նրան ճանաչում էին այդ կնիքով: Մեղուն եղել է Շոշի դրամահատարանի խորհրդանիշներից մեկը: Դա բացատրվում է նրանով, որ Շոշի հույն բնակիչների նշանակալից մասը Եփեսոսից էր և պահպանել էր եփեսոսյան Արտեմիսի պաշտամունքը⁴: Հավանաբար, կնիքը պատկանել է ավանդաբար գինու միջազգային առևտրով զբաղվող մի ընտանիքի: Այն վկայում է Շոշի՝ Իրանի հետ Հայաստանի առևտրական կապերի, Արտաշատ՝ Հայաստան գինի ներմուծելու, իսկ կնքադրոշմների քանակը խոսում է գործարքների հաճախականության մասին:

Մի այլ կնքադրոշմի մակերեսին մահիկի մեջ պատկերված է աստղ (արև), որը աքեմենյան Իրանի խորհրդանշանն է (№ 1025, 1026): 1025-ի (1 օրինակ) վերին մասում հնարավոր է՝ գրված է պարթևական (միջին իրանական) գրույթյամբ, համաձայն է. Մորանոյի rzm̄r (dnr) razmadar din, dyn=“razman”= phalanx-փաղանգ, «հին հունական հետևազոր», հոծ շարք: Փաղանգը հետևազորի գլխավոր ուժն էր: Փաղանգ բառը նշանակում է նաև զինվորական ադմինիստրատիվ միավոր⁵: Այս կնիքը եղել է այդ միավորի պաշտոնական կնիքը: № 1026 (10 օրինակ) կնքադրոշմի վրա գրված է “sp̄s̄”aspasaš, որը, զուցե, պարունակում է իրանական asp=ձի, այստեղ, հավանաբար կարող է լինել հեծելազոր: Փաղանգին համապատասխան բանակում կար նաև հեծելազորի հատուկ միավոր՝ ագեմա⁶, որը, ըստ Պոլիբիոսի, լավագույն հեծելազորային բանակն էր: Այս կնիքն էլ հեծելազորի պաշտոնական միավորի կնիքն է: Այն վաղ պարթևական է և կարող է պատկանել մ. թ. ա. III դ. երկրորդ կեսին կամ մ. թ. ա. II դ. սկզբին (Վ. Ա. Լիվշից): № 1027 և 1028 կնքադրոշմների վրա արամեերեն ընթերցվում է ḡr=[gār]=ապրել, բնակվել, ḡy[gē]=հաճելի, ḡer[gēr(ā)]= նետ (Է. Մորանո): Բանակում կային նաև այլ հատուկ զորատեսակներ՝ աղեղնավորներ, նիզակ նետողներ, պարսատիկավորներ և այլն⁷: Ըստ երևույթին, այս կնիքն էլ պատկանել է նետաձիգների ադմինիստրատիվ միավորին: № 1018 (2 օրինակ) կնքադրոշմի վրա արամեերեն գրված է 'rq-arq=«հող», «հողակտոր»: Ամենայն հավանակա-

Early History of the Alphabet. Jerusalem, 1987, p. 138ff), որոշ տառեր նման են Հաթրայի մինչև 97-98 թթ. արձանագրությունների տառաձևերին:

⁴ E. T. N e v e l l. The Coinage of the Eastern Seleucid Mints from Selencus to Antiochus III. New York, 1938, p. 115-123, 475-476; W. T a r n. The Greeks in Bactria and India. Cambridge, 1952, p. 6; Г. А. К о ш е л е н к о. Монетное дело Парфии при Митридатe I.- “Нумизматика и эпиграфика”. М., 1972, с. 9.


⁵ Э. Б и к е р м а н. Государство Селевкидов. М., 1985, с. 54.

⁶ Նույն տեղում, էջ 57:


⁷ Նույն տեղում, էջ 56:

նությամբ, հողի առքուվաճառք կատարող պաշտոնյայի կնիքն է (Հայաստան²): № 1020 (8 օրինակ) վրան արամեերեն գրված է 1.(m) z/ybryn, mzbbyn=«վաճառականն է ր»: Ըստ երևութին, մասնագիտացված առևտրականների ինչ-որ միության կնիքն է: 2. sypr/d (Է. Մորանն):

№ 1021 (3 օրինակ). պարթևական է. (1) mtr> Mihr (կամ Miθr): (2) BYRT ամրոց: Նիսայի օստրակաների վրայի փաստաթղթերում Mtrdtkrt BYRT = Mihrdatkirt diz «Միհրդատակիրտ ամրոց» (Վ. Ա. Լիվշից): Ըստ Լիվշիցի, որոշ փաստաթղթերում Mtrdtkrt փոխարեն կրճատված Mtr ձևով է: Այսինքն՝ Միհրդատակերտ ամրոցի կնիքն է, որտեղի հետ ինչ-որ պաշտոնական կամ առևտրական կապ է եղել: 1017b պարթևական myw[hzy կամ wyl[Awel] արամեական կամ հրեական անունն է (Վ. Ա. Լիվշից):



№ 122 (2 օրինակ). հնարավոր է՝ պարթևական šrgw=šargu, «առյուծ» կնքատիրոջ անունն է: Կնքադրոշմի վրա պատկերված է մեդական գլխարկով տղամարդ, որը նետահարում է քարայծին: Որսորդի և որսի միջև պատկերված է աստղ (արև), իսկ նրա առջևում արմավենու ճյուղ (հաղթանակի խորհրդանշան): Այսինքն՝ պատկերը ներկայացնում է հաղթական արքայական որսի տեսարան, և, հավանաբար, պատկերված է մար Արտավազդը՝ Անտոնինոսի դաշնակիցը: Այդ Մար Արտավազդ IV-ի Հայաստանի թագավոր դառնալու շրջանի հետ պիտի կապել, հավանաբար, մեդական գլխարկով հետիոտնի և հեծյալի հաղթական որսի տեսարանով, կնքադրոշմների առկայությունը Արտաշատում (№ 109, 110, 112, 114, 121), ինչպես նաև զոհասեղանի առջև կանգնած մեդական գլխարկով տղամարդու և դափնեպսակը ձեռքին կանգնած կնոջ (Անահիտ) պատկերող կնքադրոշմները (№ 133, 138 և այլն):



Կնքադրոշմների մի մասն իր թեմատիկայով նույնպես կապվում է իրանական աշխարհի հետ: Դրանցից ամենահինն արված է գլանաձև կնիքով, որտեղ պատկերված է դեպի աջ քայլող գերիների շարան (№ 92):

Գլանաձև կնիքներն ի հայտ են գալիս և տարածում են ստանում հարավային Միջագետքում: Դրանք օգտագործման մեջ են մտնում դեռևս V հազարամյակի վերջին և IV հազարամյակի սկզբին⁸: Գրեթե միաժամանակ այս կնիքները կիրառության մեջ են մտնում Եգիպտոսում, ավելի ուշ օգտագործում են խեթերը, բաբելացիները, ասորեստանցիները և Առաջավոր Ասիայի այլ ժողովուրդներ⁹: Գլանաձև կնիքները պատրաստվում էին տարբեր նյութերից, գլխավորապես քարից: Ուշագրավ է, որ Եգիպտոսում հիերոգլիֆ գրերում կնիքը նշված է քարի պատկերով¹⁰: Հայտնի է, որ մ. թ. ա. V դ. կիրառության մեջ մտած նոր ձևերի կնիքները, ավելի հեշտ գործածության շնորհիվ, աստիճանաբար դուրս մղեցին գլանաձև կնիքները, թեև շատ երկրներում երկար ժամանակ մնացել են կիրառության մեջ¹¹: Այդ մասին է վկայում նաև Արտաշատի կնքադրոշմը: Գերիների այդպիսի շքերթ պատկերված է Բեհիսթունյան ժայռի վրա¹²: Արտաշատի կնքադրոշմի գերիները (5 մարդ), սակայն, իրար հետ կապված են պարանով, ներկայացված են Պերսեպոլիսի գանձարանի պատի վրա պատկերված, սոգդերին բնորոշ տարազով¹³: Գերիներին առաջնորդում է զինվոր (՝) պարսկական տարազով՝ բարձր գլխարկով և թեք ծալքեր ունեցող շավարով: Մեջքին երևում է նետասլաքներով կապարձը: Հնարավոր է, Արտաշատի կնքադրոշմը Պարթևստանի բարձրաստիճան պաշտոնյայի է պատկանել, որը Հայաստան է առաքել ստրուկների հերթական խումբը:

Ստրկավաճառությունը լայնորեն տարածված էր արևմենյան և հելլենիստական և ուշ անտիկ շրջանում: Ռազմագերի ստրուկների քանակը բավականին մեծ էր: Դիոդորոս Միկիլիացին¹⁴ հաղորդում է, որ Հրահատ II-ի Բաբելոնի կառավարիչ Գիսերը մեծ թվով բաբելացիներ է վաճառել:

Հայաստանում ստրկական ուժի պահանջարկը մեծ է եղել: Ստրուկները լայնորեն օգտագործվել են տնտեսության տարբեր ճյուղերում՝ գյուղատնտեսության, արտադրության, շինարարության և, հատկապես, ծանր պայմաններում կամ դժվարին աշխատանքի մեջ, ինչպիսիք էին զանազան հանքերը, այրադաշները և այլն¹⁵: Կային տարբեր տեսակի ստրուկներ՝ մասնավոր, պետական, տաճարական և այլն: Ակիլիսենեի տաճարին նվիրաբերում էին ստրուկներ և

⁸ Н. Д. Ф л и т н е р. Культура и искусство Двуречья и соседних стран. М., 1958, с. 56, рис. 76.

⁹ Նույն տեղում:

¹⁰ Н. Д. Ф л и т н е р. Египетские цилиндры в собрании В. С. Голонищева. М., 1926, с. 246.

¹¹ О. Я. Н е в е р о в. Геммы античного мира. М., 1983, с. 107-109.

¹² M. J. M e n a n t. Recherches sur la glyptique Orientall. Paris, 1886.

¹³ E. F. S h m i d t. Persepolis, I, Chicago-Illinois, 1953, pl. 47, №17; М. В. Г о р е л и к. К этнической идентификации персонажей, изображенных на предметах Амударьинского клада. – “Художественные памятники и проблемы культуры Востока”, Л., 1985, с. 38, табл. II. 3.

¹⁴ D i o d, XXXIV, 44 a.

¹⁵ Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Երևան, 1971, էջ 646-655, Գ. Իւ. Ս ա ր ց ա յ ա ն. Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների մասին, Երևան, 1962:

ստրկուհիներ՝ Անահիտ աստվածուհուն ծառայելու համար: Եվ դրանում ոչ մի գարնանալի բան չկա, ասում է Ստրաբոնը¹⁶:

Ստրկության աղբյուրները տարբեր էին. բնական աճ, գերեվարություն և առևտուր: Ստրուկների առևտրի լայն տարածման մասին է վկայում մասնագիտացված վաճառականների գոյությունը, որոնք զբաղվում էին ստրկավաճառությամբ («վաճառականք մարդագինք»)՝¹⁷: Դա խոսում է Հայաստանում առևտրի մասնագիտացման մասին, այսինքն՝ ստրուկների պահանջարկը Հայաստանը բավարարել է նաև առևտրական ճանապարհով:

Մի խումբ կնքադրոշմներ ներկայացնում են թագավորի հաղթական որսի թեմայով տեսարաններ (օրինակ՝ № 111): Դրանցից մեկի պատկերը լրիվ չի տեղավորվել կավի վրա՝ գնդի փոքր լինելու պատճառով, և այն վերականգնվում է երեք նման կնքադրոշմի օգնությամբ (№ 94): Այստեղ թագավորը (՝) կանգնած է ռազմակառքի վերջնամասում և նետահարում է հետևի ոտքերի վրա, հարձակողական դիրքով կանգնած առյուծին: Առջևում կանգնած մարդը դեկավարում է կառքը¹⁸: Ուշագրավ է սաստրապական գլխարկով մորուքավոր մարդու մենամարտը վարագի հետ (մ. թ. ա. III-II դդ.): Չախ ոտքը առաջ դրած տղամարդը ձախ ձեռքով բռնել է գրեթե հորիզոնական դիրքում գտնվող իր վրա հարձակված վարագի գլխից և աջ ձեռքի ակինակով հարվածում է կենդանու կրծքին (№ 124)¹⁹: Մեծ թիվ են կազմում մեղական (կիսակլոր) գլխարկով հեծյալի որսի տեսարանները, որտեղ ձիավորը նիզակով հարվածում է հետևի ոտքերի վրա կանգնած այծին կամ եղջերուին:

Կնքադրոշմների մեջ կա մի խումբ, որոնց մակերեսին պատկերված են առանձին և կենդանիների վրա կանգնած արծիվներ (№ 580): Արծվի պատկերը տարածված էր հերալդիկայում, այն զինանշան էր, արքայական թռչուն (№ 694): Նեմրոթ լեռան վրայի դամբարան սրբավայրում Դարեհ I-ի տիարայի ժապավենը հարդարված է արծիվներով: Ուշագրավ են Էրեբունիի քաղաքային թաղամասից հայտնաբերված արծաթե ռիտոնի հեծյալի, մեղական տիպի գլխարկի աջ ու ձախ կողմերին հերալդիկ դիրքով, թևերը բացած արծվի պատկերները (մ. թ. ա. IV դ. առաջին կես [նկ. 1])²⁰: Արծիվը՝ որպես զինանշան, ծառայել է նաև Երվանդունիներին, որոնցից այն ժառանգել են Արտաշեսյանները: Այդ են վկայում Տիգրան II-ի թագի վրա պատկերված արեգակի երկու կողմում կանգնած գլուխները հետ, դեպի արևը դարձրած արծիվները:

Հետաքրքիր խումբ են կազմում աստվածային ինվեստիտուրայի թեմաները: Դրանք ներկայացնում են բարձր կիսակլոր գլխարկով թագավորին, ձևավոր ոտքերով գահին նստած, նրա դիմաց կանգնած աստվածուհին (Անահիտը)

¹⁶ С т р а б о н. География в 17 книгах (перевод, статья и комментарии Г. А. Стратановского), Л., 1964, XI, XIV, 16.

¹⁷ Հայ ժողովրդի պատմություն, հ. II, Երևան, 1984, էջ 149:

¹⁸ Z h. K h a c h a t r i a n. The Archives of Sealings Found at Artashat (Artaxata), Archives et Sceaux du monde Hellénistique.– “Bulletin de correspondance Hellénique”, Supplément 29, Paris, 1996, p. 367, pl. 73, 6a-b.

¹⁹ Նույն տեղում, pl. 73, 10:

²⁰ Ж. Д. Х а ч а т р я н, А. М а р к а р я н. Эребунийский ритон со всадником.– ВДИ, 2003, № 4, с. 114-122, рис. 2.

պսակը երկարել է դեպի թագավորի գլուխը (պարթևական մոտիվ), այսինքն՝ հանձնում է ինքնիշխանության խորհրդանիշը (№ 128)²¹: Կնքադրոշմներից մեկի վրա պատկերված է գահին նստած թագավոր, բարձր կիսակլոր գլխարկով, նրա հետևում կանգնած մարդը ձեռքը երկարել է դեպի թագավորի գլուխը (№ 127), ըստ երևույթին, թագադրում է, իսկ առջևում կանգնած մարդը անոթով (թասով) ինչ-որ խմիչք է մատուցում թագավորին (սրբազան հեղուկ, համա՞)։

Տեղին է հիշատակել թևավոր Կենտավրոսի պատկերով կնքադրոշմը (№ 814), որն առնչվում է Պարթևստանի ռիտոնների, Միհրդատակարետի (Նիսայի) ռիտոնների հետ։ Կենտավրոսները հունական առասպելական կեսմարդ - կեսձի ներկայացնող էակներ էին, անտառային դեմոններ։ Հակում ունեին զինու նկատմամբ և համարվում էին Դիոնիսոսի ուղեկիցները²²։ Սակայն հունական արվեստին թևավոր Կենտավրոսը ծանոթ չէ։ Այն հանդիպում է Նիսայում հայտնաբերված մ. թ. ա. II-I դդ. ռիտոնների պատկերներում, ինչը վկայում է գեղարվեստական գործեր ստեղծող տեղական արհեստավորների կողմից իրանական և հունական արվեստի ավանդույթների ազատ վերամշակման ու զուգորդումների (կոմբինացիա) մասին²³։ Իրանական կարելի է համարել թևավոր ցուլը (№ 821–824)։ Ուղղանկյան կնքադրոշմներից մեկի վրա՝ ցուլի վերևում, պատկերված է աստղ։

Ուշագրավ է մի շարքի վրա դեպի աջ կանգնած երեք եղջերուների պատկերը (58 օրինակ), որոնք աղերսվում են Նիսայից գտնված պարթևական կնքադրոշմի պատկերի հետ²⁴։

Այն փաստը, որ բացվել է երկու արխիվ (բացառված չէ նաև նոր, այդ թվում պաշտոնական, արխիվների հայտնաբերումը), ինքնըստինքյան վկայում է Արտաշատ քաղաքի գործարար աշխույժ կյանքի, զարգացած գործավարության ու փաստաթղթերի գրանցման կատարելագործված ձևերի մասին, և Արտաշատը դասվում է հայտնաբերված արխիվներ ունեցող հելլենիստական խոշոր կենտրոնների շարքում։ Արխիվներն արտացոլում են հին աշխարհի պատմության քաղաքական կարևորագույն դեպքերի հանգուցային պահերը, առևտրատնտեսական կապերը և կարևոր աղբյուր են Առաջավոր Ասիայի պատմության տարբեր խնդիրների պարզաբանման համար։

²¹ А. Н. Зограф. Античные монеты. Материалы и исследования по археологии СССР (այսուհետև՝ МИА). М.-Л., 1951, № 16, табл. XV, 8,9; В. Г. Л у к о н и н. Искусство древнего Ирана. М., 1974, с. 137.

²² Մ. Ն. Բ ո ն տ վ ի ն ն ի կ, Մ. Ա. Կ ո զ ա ն, Մ. Բ. Ռ ա բ ի ն ն վ ի չ, Բ. Պ. Ս ե լ ե ճ կ ի. Դիցարանական բառարան, թարգմ. Մ. Մ. Կրկյաշարյանի, Երևան, 1985, էջ 119-120:

²³ Г. А. Кошелевко. Родина парфян. М., 1977, с. 135.

²⁴ M c a u i g e G i b s o n. Parthian Seal Style: A Contribution from Nippur. Mesopotamia, XXIX, Firenze, 1994, Fig 3.

АРМЯНО-ИРАНСКИЕ СВЯЗИ
ПО ОТТИСКАМ ПЕЧАТЕЙ АРТАШАТА*ЖОРЕС ХАЧАТРЯН*

Р е з ю м е

Среди обнаруженных в Арташате материалов исключительной информативностью и научной ценностью обладают буллы. Их обнаружено более восьми тысяч, из коих шесть тысяч целых и тех, на которых прочитывается рисунок. Вместе они представляют собой 1036 самостоятельных типов. Часть этих булл связана с парфянским миром, другие – три десятка булл – снабжены арамейскими и греческими надписями, монограммами. Приводятся арамейские надписи булл и их расшифровки, сделанные В. А. Лившицем и Э. Морано, а также буллы, изображение которых тематикой связано с иранскими традициями. Сцены царской охоты изображают царя на колеснице, всадников и пеших охотников в мидийской или сатрапской шапке. Также прочитываются орлы, которые стоят на животных или на земле, крылатый кентавр, а также сцены инвеституры. В эллинистическое и позднеантичное время Армения имела широкие связи и почти со всеми странами и центрами античного мира, о чем свидетельствуют архивы булл.

ARMENIAN-IRANIAN CONNECTIONS ACCORDING TO THE IMPRINTS
OF THE SEALS FROM ARTASHAT*ZHORES KHACHATRYAN*

S u m m a r y

Among the excavated findings in Artashat the bulls contain exclusive information and scientific value. Their number is 8 000, from which 6 000 are saved and on the others one can observe the parts of the pictures. Altogether they represent 1036 independent types. Part of these bulls is connected with the Parthian world, the others – circa 30 bulls – bear Aramaic and Greek inscriptions and monograms. The decodings made by A. Livshits and E. Morano are brought forward, also the bulls with the images on the topic of Iranian traditions are presented. Scenes of the royal hunting show the king standing on chariot, with rider and pedestrian hunters wearing the Mydian or the Satrapian hats; one can note the eagles, which are standing on the animals or on the ground; the winged centaur and the scenes of investiture as well. These archives of bulls confirm that Armenia used to have close relationship with all the countries and centres of the Ancient world in Hellenistic and Late-Ancient times.